

Բանալի բառեր՝ կառավարման արդյունավետություն, ֆինանսական ռեսուրսների ներգրավվում, նպատակամետ կառավարչական որոշումներ:

ՀՏԴ 336.71:338.24:159.9

Ֆինանսական ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Վտենախոսության թեմա՝
Ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը առևտրային բանկերում (ՀՀ նյութերով)

Միքայել ԶԱՎԱԴՅԱՆ
 ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Գիտական դեկավար՝
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր


Բանական իմաստով ռեսուրս է ներկայացվում այն ամենը, ինչը հնարավոր է օգտագործել ըստ նպատակայնության: Այս առումով ցանկացած ռեսուրս առաջին հերթին ճանաչվում և արժևորվում է ըստ իր օգտագործման հասցեականության¹: Նման ընկալմամբ առևտրային բանկերի ֆինանսական ռեսուրսները կարելի է ներկայացնել որպես դրամական միջոցների համախումբ, որը թիրախավորվելով բանկային կայուն գործունեության ապահովմանը՝ ձևավորում է վերջինիս համար անհրաժեշտ և բավարար ակտիվներ:

Բանկային գործունեության կայուն զարգացումը մի կողմից ենթադրում է բանկերի անխափան տնտեսական գործունեության և հավասարակշռված ֆինանսատնտեսական միջավայրի իրատեսական երաշխիքներ, մյուս կողմից՝ միջնորդային շուկաներում բանկի մրցակցային դիրքի շարունակական բարելավում: Հետևաբար ֆինանսական ռեսուրսները չպետք է դիտարկվեն բացառապես բանկային գործունեության անխափանության տեսանկյունից, այլ իրենց առանցքային դերակատարումը պետք է ունենան ռազմավարական զարգացման հայեցակարգում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գործող ֆինանսական հաստատությունների ակտիվների բաշխման կառուցվածքում գերակշիռ մասը՝ 87.3%-ը, բաժին է ընկնում առևտրային բանկերին (գծապատկեր 1): Դա պահանջում է բանկային գործունեության ֆինանսական ռեսուրսների հասցեական և արդյունավետ օգտագործում՝ նպաստելով նաև մակրոտնտեսական հավասարակշռության ապահովմանը: Հենց այս նկատառմամբ հետազոտողները բանկերի ֆինանսական ռեսուրսների կառավարման հիմնախնդիրները տեղափոխում են նաև մակրոտնտեսական հարթություն:

Գծապատկեր 1.

Տնօրինվող ակտիվների կառուցվածքն ըստ ՀՀ-ում գործող ֆինանսական հաստատությունների (%)²




¹ Балацкий Е. В. Теория жизненных ресурсов: модели и эмпирические оценки // Мониторинг общественного мнения. 2007, № 2, с. 124-133.

² ՀՀ Կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2017»: Երևան, ՀՀ ԿԲ, 2017, էջ 30:

Դրա հետ մեկտեղ մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր հեղինակներն են կիսում նման մոտեցումը՝ գտնելով, որ ֆինանսական ռեսուրսներն ընդամենը բանկի տրամադրության տակ գտնվող միջոցների համախումբն է, որով ապահովվում են բանկի ակտիվային բնույթի գործառնությունները (վարկերի տեղաբաշխում, լիզինգ, ներդրումներ և այլն)³: Մեկ այլ մոտեցմամբ բանկերի ֆինանսական ռեսուրսները ներկայացվում են որպես բանկային կապիտալի և ներգրավված միջոցների ընդհանրություն՝ նպատակաուղղված միջնորդային գործունեության միջոցով շահույթի ձևավորմանը⁴:

Գերիշխող տեսակետներից է նաև բանկերի ֆինանսական ռեսուրսների ներկայացումը որպես պասիվային գործարքների արդյունք, երբ բանկը ներգրավում է անհրաժեշտ դրամական միջոցներ՝ ձևավորելով սեփական կապիտալ և պարտավորություններ⁵: Յենց այս առումով էլ, բանկերի ֆինանսական ռեսուրսները կարելի է դասակարգել հետևյալ հատկանիշներով (գծապատկեր 2):

**Գծապատկեր 2.
Բանկերի ֆինանսական ռեսուրսների դասակարգումը⁶**



³ Проделятченко П.А., Содержание и значение привлеченных финансовых ресурсов коммерческих банков // Российское предпринимательство. 2009, т. 10, № 11, с. 112-117.


⁴ Банковское дело. Под ред. Коробовой Г.Г. М.: Экономистъ, 2006, с. 29.

⁵ Белоглазова Г. Н., Деньги. Кредит. Банки: учебник. М., Высшее образование, Юрайт, 2011, 318 с.

⁶ Куликов Н.И., Назарчук Н.П., Банковские ресурсы, их формирование и эффективное использование. Тамбов, "ТГТУ", 2014, стр. 6.

Բանկերի ֆինանսական ռեսուրսները կարելի է դասակարգել նաև հաշվապահական հաշվեկշռի պասիվային մասի ձևավորման տեսանկյունից, այսինքն ըստ ձևավորման առանձին աղբյուրների (տես գծապատկեր 3): Այս մոտեցումը առավել գործնական է համարվում, քանի որ հնարավորություն է ընձեռում գնահատել ֆինանսական ռեսուրսների ներգրավման աղբյուրների կառուցվածքը և բանկերի ինքնավարության աստիճանը⁷:

Գծապատկեր 3.
Բանկերի ֆինանսական ռեսուրսների դասակարգումն ըստ ձևավորման աղբյուրների⁸



Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ բանկային համակարգում նախորդ տարիների համեմատ պարտավորությունների աճը կապիտալի աճի նկատմամբ առաջանցիկ բնույթ է կրել (աղյուսակ 1): Միայն 2016 թվականին է, որ հավելաճի տեսակը փոխվել է հոգուտ բանկային կապիտալի ավելացման: Եվ չնայած այն համաձայնեքին, որ կապիտալի համարժեքությունը առևտրային բանկերում խիստ վերահսկողության տակ է գտնվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից և պահպանվում է նորմատիվի սահմաններում, այնուամենայնիվ, ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ կառավարչական որոշումների առանցքային ուղղություն պետք է համարել առևտրային բանկերի կապիտալի և պարտավորությունների կառուցվածքային տեղաշարժերի կարգավորումը:

ՀՀ ԿԲ-ի որոշմամբ 2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում գործող առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը 5 միլիարդ դրամից հասցվեց 30 միլիարդ դրամի, ինչը համարժեք է շուրջ 60 միլիոն ԱՄՆ դոլարի: Արդյունքում ՀՀ-ում գործող առևտրային բանկերը նախորդ տարիների համեմատությամբ շուրջ 6 անգամ մեծացրեցին իրենց ընդհանուր կապիտալը, ինչը ոչ միայն ուժեղացրեց բանկային կապիտալի պաշտպանիչ գործառույթը, այլև նպաստեց Բազել 3-ի շրջանակներում նախատեսվող ֆինանսական ռեսուրսների որակական կազմի ապահովումը:

Այսպես, Բազել 3-ով նախատեսվում է բուֆերային կապիտալի ձևավորում, որը հանդես է գալիս որպես նախաճգնաժամային իրավիճակներում բանկի վնասների փոխհատուցման համար հատուկ ֆինանսական ռեսուրս: Որպես նպատակային ֆինանսավորման գործիք՝ այն ընդգրկվում է առևտրային բանկի սեփական կապիտալի կազմում: Ընդ որում, Բազել-3-ի պահանջներով նախատեսվում են շահաբաժինների և բոնուսների վճարման սահմանափակումներ, եթե բանկերին չի հաջողվում ձևավորել բուֆերային կապիտալ⁹:

Առևտրային բանկերի ֆինանսական ռեսուրսների գծով կառավարչական որոշումների կարևոր ուղղություն է հանդիսանում ներգրավված միջոցների կառուցվածքի բարելավումը: Ներկայումս առաջնային կարևորություն ունի ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների համաչափ դիվերսիֆիկացումը, քանի որ 2017 թվականի տվյալներով բանկային ավանդների շուրջ 66.4%-ը բաժին է ընկնում տնային տնտեսություններին: Հետևաբար ավանդների միջոցով բանկերի ֆինանսական ռեսուրսների ձևավորումը Էական կախվածության մեջ է հայտնվում սոցիալական ռիսկերից, քանի որ ազգաբնակչության խնայողությունների կրճատման պարագայում կտրուկ նվազում են ներդրված ավանդները, որի արդյունքում՝ ՀՀ բանկային համակարգում ֆինանսական ռեսուրսների ձևավորման մեխանիզմը դառնում է ռիսկային:

⁷ Бондарева Ю.В., Шовиков С. А., Хаиров Р. Р., Перспективы развития ресурсной базы банков. Мнение аналитиков МАП РФ. Банковское дело, 2011, № 11. с. 17-19.


⁸ Կազմված է հեղինակի կողմից:

⁹ Базель III. Вопросы внедрения, <http://www.kpmg.ru>, стр. 5

ՉՀ առևտրային բանկերի պարտավորությունները և սեփական կապիտալը, մլն դրամ ¹⁰ Աղյուսակ 1.

Ռեսուրսների ներգրավման աղբյուրներ	2011	2012	2013	2014	2015	2016
Պարտավորություններ	1710535	2077008	2487468	2942142	2943020	3340954
- աճը նախորդ տարվա նկատմամբ	-	1.21	1.19	1.18	1.01	1.13
Ընդամենը կապիտալ	355922	393346	455985	468633	506572	653591
- աճը նախորդ տարվա նկատմամբ	-	1.10	1.16	1.07	1.08	1.29
Կանոնադրական հիմնադրամ	233945	244127	263030	290108	356621	458005
Գլխավոր պահուստ	18642	20033	22655	27335	30672	31927
Շահույթ/վնաս	85371	108769	136381	129074	101803	11957
Կապիտալի այլ տարրեր	17964	20417	33919	22116	17476	44086

Ներգրավված ավանդների կառուցվածքը ՉՀ ֆինանսական կազմակերպություններում, 2017թ.: ¹⁰ Գծապատկեր 4.



Ակտիվ գործառնությունների արդյունքում ֆինանսական ռեսուրսների շրջապտույտի արագությունը նույնպես ընդգրկվում է ֆինանսական ռեսուրսների կառավարման շրջանակներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՉՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելներում երկարաժամկետ վարկերը ոչ միայն գերակշիռ մաս են կազմում, այլև ունեն աճի միտում (տես աղյուսակ 2): Նման իրավիճակում խնդիր է դրվում կայացնելու այնպիսի կառավարչական որոշումներ, որոնք հնարավորություն կտան բանկերին լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ձեռք բերման հարցում ճկուն դրսևորվել: Երկարաժամկետ վարկային ներդրումների ծավալային առաջանցիկությունը կարճաժամկետ վարկերի նկատմամբ առևտրային բանկերում ձևավորում է ֆինանսական ռեսուրսների պակաս, որի լրացման նպատակով բանկերը միաժամանակ մի բանի ուղղությամբ կառավարչական որոշումներ են կայացնում:

Փորձը ցույց է տալիս, որ ՉՀ առևտրային բանկերը չեն ձգտում բարձրացնել ավանդների տոկոսադրույքները՝ ֆինանսական ռեսուրսների ժամանակավոր պակասը լրացնելով պարտատոմսերի թողարկմամբ: Սակայն միջազգային պրակտիկայում երկարաժամկետ վարկերը լայնորեն օգտագործվում են ակտիվների արժեթղթավորման գործընթացում՝ առևտրային բանկերում ձևավորելով լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, որոնք ուղղորդվում են վերավարկավորման

¹⁰ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2011-2016: Վիճակագրական ժողովածու ՉՀ ԱՎԾ, ք.Երևան, 2017թ. էջ 45:

ուղրոտ¹¹: Այս ճանապարհով առևտրային բանկերը «երկար փողերը» վերավորակավորելու և ներդրումային ուղրոտներ ուղղորդելու կառավարչական որոշումներ են կայացնում¹²:

Աղյուսակ 2.
Առևտրային բանկերի վարկային տեղաբաշխումների մնացորդները ըստ ժամկետայնության (մլն դրամ)¹³

Ցուցանիշներ	2011	2012	2013	2014	2015	2016
Վարկային ներդրումներ, այդ թվում	1250404	1527886	1658727	1994525	1939739	2280711
Երկարաժամկետ	964355	1171994	1324569	1652134	1672876	1843346
%-ով՝ ընդհանուրից	77.1	76.7	79.9	82.8	86.2	80.8
Կարճաժամկետ	286049	355892	334158	342391	266863	437365
%-ով՝ ընդհանուրից	22,9	23.3	20.1	17.2	13.8	19.2

Մասնագիտական գրականությունում մեծ դեր է հատկացվում ըստ կապիտալի հատույցի և ֆինանսական ռիսկերի համադրության առևտրային բանկերի ֆինանսական ռեսուրսների գծով կառավարչական որոշումների կայացումը¹⁴: Վարկային ռեսուրսների տեղաբաշխումը համարելով ռիսկային՝ բանկերը ձգտում են ոչ միայն ամրապնդել տնօրինող կապիտալի որակական կազմը, այլև հնարավորինս բարձրացնել կապիտալի շահութաբերությունը՝ արդարացնելով պարտավորությունների ձևով լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու և տեղաբաշխելու գործընթացը: Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ առևտրային բանկերից ոչ բոլորին է հաջողվում կապիտալի հատույցի մրցակցային շեմ ապահովել, իսկ նրանցից մի բանիսն անգամ այդ ուղրոտում ներկայանում են բացասական ցուցանիշներով (աղյուսակ 3)

Աղյուսակ 3.
ՀՀ առևտրային բանկերի շահութաբերությունը 2017 թվականին (%)

	ՀՀ առևտրային բանկեր	Շահութաբերությունը ըստ կապիտալի (ROE)
1	Ինտերբանկ	3.81
2	Արմավիսբանկ	3.58
3	Եյջ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	3.29
4	Ազքա-Կրեդիտ-Ազրիկոլ բանկ	2.57
5	Ամերիաբանկ	2.52
6	Անեյիբ բանկ	2.37
7	Արոշինբանկ	1.88
8	Հայբիզես բանկ	1.84
9	Բիբլիոս բանկ	1.25
10	Կոնվերսո բանկ	1.20
11	Պրոմեթեյ բանկ	1.14
12	Մեյլաթ բանկ	0.78
13	Արարատ բանկ	0.57
14	ՀայԷկոնոմ բանկ	0.26
15	Յունիբանկ	0.27
16	ՎՏԲ -Հայաստան բանկ	- 1.79
17	Արցախ բանկ	- 2.04

Այսպիսով, առևտրային բանկերում ֆինանսական ռեսուրսների գծով կառավարչական որոշումների կայացման գործընթացը բազմաթիվ ուղղություններ և հարթություններ է ընդգրկում, որը բխում է ոչ միայն բանկային գործունեության առանձնահատկություններից, այլև կառավարման առջև դրված խնդիրներից: Կառավարում կարելի է սահմանել որպես տնտեսական օրինաչափություններին համապատասխան կյուրակական և հոգևոր բարիքների, ծառայությունների ստեղծմանը նպաստակառողմած աշխատանքի վրա համակարգված կարգավորիչ ներգործություն: Ըստ այս բնորոշման հեղինակների՝ կառավարումը ներկայացվում է որպես նպատակամետ աշխատանք, որը հնարավոր է բնութագրել բանակական և որակական հատկանիշներով¹⁵:

Ավանդաբար կառավարումը ներկայացվում է որպես պլանավորման, շահադրդման, կազմակերպման և վերահսկողության գործառնությունների ամբողջություն: Սակայն, այս դեպքում էլ մեկնաբանվում է ոչ թե կառավարման բուն


¹¹ Ոսկանյան Ա., Ակտիվների արժեթղթավորման նախադրյալներն ու խոչընդոտները ՀՀ-ում: Ալլընտրանք գիտական հանդես, 2017, #4 էջ 57-66
¹² Սալնազարյան Ա., Մամիկոնյան Կ., Բանկային ակտիվների արժեթղթավորումը որպես ՀՀ կապիտալի շուկայի ակտիվացման և երկար փողերի ձևավորման նախապայման: Ֆինանսներ և Էկոնոմիկա, 2 (164), 2014, էջ 12-15
¹³ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2011-2016: Վիճակագրական ժողովածու: ՀՀ ԱՎԾ, ք.Երևան, 2017, էջ 45
¹⁴ Անդրեասյան Ն.Յ., Կառավարչական որոշումների ուղղությունները բանկային ռիսկերի շրջանակում, «Ֆինանսներ և Էկոնոմիկա», # 4-5 (198-199) 2017, էջ 94-97:
¹⁵ Մենեջմենթ: Յու. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ (երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն): Եր., Տնտեսագետ, 2009, էջ 14:

գործընթացը, այլ ընդամենը դրանից բխող գործառնությունների շրջանակը: Եվ այս բացը լրացնելու համար մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ «Մենք մենք կազմակերպական ռեսուրսների պլանավորման, կազմակերպման, ղեկավարման և վերահսկման միջոցով կազմակերպական նպատակների արդյունավետ և արտադրողական նվաճումն է»¹⁶:

Հիմք ընդունելով այս բնորոշումը՝ առևտրային բանկերում ֆինանսական ռեսուրսների գծով կառավարչական որոշումները մեր կողմից դասակարգվում են ընդհանրացված ոլորտներով (գծապատկեր 5), որոնցից են կայուն զարգացման և իրացվելիության ապահովման նպատակներով ռեսուրսների կառուցվածքային բարեփոխումներն ու ռեսուրսների ձեռք բերման աղբյուրների արագության ավելացման նպատակով ֆինանսական միջոցների ներգրավվման դիվերսիֆիկացման ընդլայնումը: Միաժամանակ կարևորվում են այնպիսի կառավարչական որոշումները, որոնք ոչ միայն չեն առաջացնում լրացուցիչ ֆինանսական ռիսկեր, այլև հնարավորինս կանխարգելում են դրանք՝ զուգահեռաբար նպաստելով բանկային կապիտալի շահութաբերության աճին:

Գծապատկեր 5.

Առևտրային բանկերում ֆինանսական ռեսուրսների գծով կառավարչական որոշումների հիմնական ուղղությունները¹⁷



Ֆինանսական ռեսուրսների գծով կառավարչական որոշումների խմբավորման առաջարկվող ուղղությունները կարող են հաշվի առնվել կառավարման արդյունավետության գնահատման հաշվարկներում, քանի որ դրանք համակարգում են ֆինանսական ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման գործընթացներում բանկային ծառայությունների նպատակաուղղված կարգավորիչ գործողությունները: Այս կտրվածքով կառավարչական որոշումների դիտարկումը հնարավորություն է ընձեռում ֆինանսական ռեսուրսների կառավարումը բնութագրել նաև որպես նպատակամետ գործունեություն, որը կարելի է բնութագրել դրա իրականացման արդյունավետության քանակական և որակական ցուցանիշներով:

Ներկայացվել է 05.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.

¹⁶ Հովհաննիսյան Ա., Մենք մենքի հիմունքներ, Եր.: Հեղ. հրատ., 2015, 78 էջ:

¹⁷ Կազմվել է հեղինակի կողմից: